նել զանց, զի մի սակաւ առ սակաւ ելցէ յառաջին ատիճանն։ Գրեցին նոյնպէս և առ Բեռահեայ Կարապետ Ամիրայ լինել ձեռնտու, ('ի 22 Փետրվարի)։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Ամբաստութիւն Լատինաց 'ի Բեթղեհեմ։ Փակուցեալ դրան Լատինաց։ Հակառակութիւն ցունաց յԱյրին Ծննդեան եւ վասն եկեղեցւոյն։ Երկաթեայ դուռն և ապատարհան քիւ 'ի վերայ նորա։ Ընտրութիւն Գաբրիել եպիսկոպոսի յԱթոռն Երուսաղէմի։ Գերեզմանատուն Նեստորականաց։ Զանք Լատինաց վասն դրան։

ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ գաւառ Լատին կղերաց առնէին ըստ յօժարութեան իւրեանց յեկեղեցին Բեթղեհէմի. զի յաւուր միում յանկարծ զեղեալ 'ի ներքս, կալեալ զբրիւռացն Հայոց ընկեցին 'ի բաց, և խանդարեալ զժամերգութիւնն, իջին յԱյրն, և երբեմն ժողովեալ զՄէլլահս գիւղին զարս և զկանայս և զմանկտիս և խառնիճաղանճ բազմութեամբ անցանէին անտի, եւ զոր միանգամ գտանէին 'ի ճանապարհին առաթուր կոխէին և կամ բարձեալ ընկենուին 'ի բաց. և 'ի պատահիլ միաբանաց և ուխտաւորաց տապալէին զնոսա, և այլ սոցին նման անարգանօք զզուէին զՀայս. և 'ի բողոքել նոցա առ Դատաւորն, գրեալ յայտ արար նա 'ի Դուռն զնեղութիւնս Հայոց, զոր կրէին յերեսաց Լատինաց, որպէս գրեալ էին զայնմանէ նախորդք իւր, և չէր լեալ օգուտ ինչ։

Ի սին ամի Կուսակալն Դամասկոսի Սալէհ Փաշա ինքնին եկ յայցելութիւն գաւառին, եւ եհաս յԵրուսաղէմ. և 'ի գնալ իւր 'ի Բեբրոն յուխտ 'ի գերեզման Հայր Աբրահամու, հանդիպեցաւ 'ի Բեթղեհէմ, կատարել զուխտս 'ի տեղի Ծննդեան Քրիստոսի, եւ տեսեալ զանվայելուչ ճանապարհն Լատինաց 'ի մէջ եկեղեցւոյն, եհարց ցՀայս, և նոքա յայտ արարին նմա թէ որպէս սահմանեցաւ 'ի սկզբան գնալ Լատինաց յետուստ կողմանէ, և թէ որքան չարիս եւ նեղութիւնս հասուցին Հայոց՝ մինչեւ վիրաւորել զեկեղեցականս, զանհնաղանդ և զըմբոստ բարս նոցա, այ-